# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համախառն ներքին արդյունքը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, 2000-2009թթ. (ընթացիկ գներով) 3
Համախառն ներքին արդյունքը 2009թ. 4
Համախառն ներքին արդյունքն 2009թ. ըստ եռամսյակների 6
Համախառն ներքին արդյունքի հաշվարկն արտադրական եղանակով 2009թ. 9
Համախառն ներքին արդյունքի հաշվարկը եկամուտների ձևավորման եղանակով 2009թ. 11
Հավելված 1

***2007***

Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի 14
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի 15
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների 16
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների 17

***2008***

Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի 18
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի 19
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների 20
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների 21

***2009***

Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի 22
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի 23
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների 24
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների 25
Համախառն ներքին արդյունքը 2007-2009թթ. 26
Հավելված 2
Մեթոդաբանական ցուցումներ 27

*Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:*

**Պայմանական նշաններ**

| | |
|---|---|
| տվյալները բացակայում են | -- |
| երևույթը բացակայում է | - |
| չնչին մեծություն | 0.0 |
| տվյալները ճշտված են | # |

# Համախառն ներքին արդյունքը և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, 2000-2009թթ. (ընթացիկ գներով)

| Տարիներ | ՀՆԱ | | ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով | | Տեղեկատու | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն դրամ | հազ. ԱՄՆ դոլար | հազ. դրամ | ԱՄՆ դոլար | դոլար/դրամ միջին տարեկան փոխարժեքը | բնակչության թվաքանակը, հազ. մարդ |
| 2000 | 23148.6 | 42907.5 | 172.2 | 319.3 | 539.52 | 134.4 |
| 2001 | 23880.7 | 43020.5 | 176.0 | 317.0 | 555.09 | 135.7 |
| 2002 | 26477.8 | 46198.4 | 193.8 | 338.2 | 573.15 | 136.6 |
| 2003 | 33883.7 | 58551.4 | 247.3 | 427.4 | 578.7 | 137.0 |
| 2004 | 42830.0 | 80485.5 | 312.2 | 586.6 | 532.15 | 137.2 |
| 2005 | 51379.4 | 112236.1 | 373.1 | 815.1 | 457.78 | 137.7 |
| 2006 | 61885.9 | 148789.1 | 449.4 | 1080.5 | 415.93 | 137.7 |
| 2007 | 70791.0 | 206791.7 | 510.0 | 1489.5 | 342.33 | 138.8 |
| 2008 | 87148.1 | 284825.6 | 623.1 | 2036.5 | 305.97 | 139.9 |
| 2009 | 102338.7 | 281699.7 | 723.7 | 1992.2 | 363.29 | 141.4 |

# Համախառն ներքին արդյունքը 2009թ.

2009թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համախառն ներքին արդյունքը շուկայական գներով կազմել է 102338.7 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.1 տոկոսով՝ ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորի 3.9 տոկոս մակարդակի պայմաններում:




**Գծապատկեր 1: Համախառն ներքին արդյունքի աճի տեմպը (տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ) 1997-2009թթ.:**

ՀՆԱ-ի իրական աճի վրա դրական ազդեցություն են ունեցել և ապրանքների, և ծառայությունների արտադրության ոլորտները՝ համապատասխանաբար 11.1 և 17.5 տոկոս:

ՀՆԱ-ի աճը առանց զուտ հարկերի (ՀՆԱ հիմնական գներով) կազմել է 14.4 տոկոս, այսինքն՝ զուտ հարկերի 1.1 տոկոս նվազումը բերել է ՀՆԱ-ի իրական աճի նվազմանը ՝ 1.3 տոկոսային կետով:

ՀՆԱ-ի արձանագրված 13.1 տոկոս հավելաճի տեմպի 2.8 տոկոսային կետն ապահովել է ֆինանսներ և վարկը, 2.3-ը՝ արդյունաբերությունը, 1.9-ական տոկոսային կետերը՝ շինարարությունը, տրանսպորտ և կապը:

Համախառն ներքին արդյունք

*Համախառն ներքին արդյունքը 2008-2009թթ.*

/մլն դրամ/

| | 2008թ. | 2009թ. | Իրական աճի տեմպը (տոկոսներով) |
|---|---|---|---|
| **Համախառն ներքին արդյունք** | **87148.1** | **102338.7** | **113.1** |
| Ապրանքների արտադրություն | 34667.6 | 42311.6 | 111.1 |
| Ծառայությունների արտադրություն | 47084.9 | 54983.7 | 117.5 |
| այդ թվում՝ շուկայական ծառայություններ | 20257.0 | 27296.6 | 134.0 |
| ոչ շուկայական ծառայություններ | 26827.9 | 27687.1 | 105.1 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | 2345.8 | 3283.2 | 132.7 |
| Ապրանքների զուտ հարկեր | 7741.4 | 8326.6 | 98.9 |

Ապրանքների արտադրության ոլորտը աճել է 11.1 տոկոսով, ընդ որում՝ արդյունաբերությունը՝ 16.6 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 1.6 տոկոսով, շինարարությունը՝ 19.1 տոկոսով:




**Գծապատկեր 2: Առանձին ճյուղերի իրական հավելաճի տեմպերը (տոկոսներով՝ 2008թ. նկատմամբ)**

Ծառայությունների արտադրության ոլորտի 17.5 տոկոս իրական աճը հիմնականում հետևանք է շուկայական ծառայությունների՝ 34.0, մասամբ էլ՝ ոչ շուկայական ծառայությունների՝ 5.1 տոկոս աճերի:

Շուկայական ծառայությունների աճը պայմանավորված է հիմնականում վարկավորման, տրանսպորտ և կապի ճյուղերում ավելացված արժեքների աճերով:

Շուկայական ծառայությունների ոլորտում 2009թ. 2008թ. նկատմամբ ավելացված արժեքի աճ գրանցվել է նաև առողջապահության և սոցիալական ապահովության՝ 2.7

անգամ, ֆինանսներ և վարկ՝ 59.4 տոկոսով, կոմունալ տնտեսության և կենցաղային սպասարկման՝ 8.7 տոկոսով, կրթության՝ 6.9 տոկոսով ճյուղերում:

2009թ. ՀՆԱ-ի գերակշռող մասը՝ 63.6 տոկոսը, ստեղծվել է մասնավոր հատվածում՝ 2008թ. 62.6 տոկոսի դիմաց: ՀՆԱ-ի մասնավոր հատվածի 22.4 տոկոսը կազմում է արդյունաբերությունը, 21.1 տոկոսը՝ գյուղատնտեսությունը, 16.6 տոկոսը՝ շինարարությունը: Ծառայությունների արտադրությունը կազմում է ՀՆԱ-ի մասնավոր հատվածի 39.8 տոկոսը, որից 27.7 տոկոսը՝ առևտուր և հանրային սնունդը, 17.3 տոկոսը՝ կապը:

2009թ. ՀՆԱ-ի մոտ 29.2 տոկոսն ստեղծվել է փոքր և միջին ձեռնարկությունների կողմից՝ 2008թ. 29.0 տոկոսի փոխարեն:

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն հանրապետությունում 2009թ. կազմել է 723.7 հազ. դրամ, 1992.2 ԱՄՆ դոլար կամ 1426.4 Եվրո, իսկ 2008թ.՝ 623.1 հազ. դրամ, 2036.5 ԱՄՆ դոլար կամ 1383.9 Եվրո:

## Համախառն ներքին արդյունքը 2009թ. ըստ եռամսյակների

2009թ. և 2008թ. արտադրված տարեկան ՀՆԱ-ն ուներ հետևյալ եռամսյակային կառուցվածքը՝ առաջին եռամսյակ՝ 16.9 տոկոս (2008թ.՝ 16.2 տոկոս), երկրորդ եռամսյակ՝ 24.8 տոկոս (24.3 տոկոս), երրորդ եռամսյակ՝ 26.0 տոկոս (27.5 տոկոս) և չորրորդ եռամսյակ՝ 32.3 տոկոս (32.0 տոկոս):

Համախառն ներքին արդյունքի արտադրության եռամսյակային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ՀՆԱ-ի գերակշռող մասն արտադրվում է երրորդ և չորրորդ եռամսյակներում:




**Գծապատկեր 3: Առանձին ճյուղերի ավելացված արժեքների դինամիկան (հազ. դրամ):**

Համախառն ներքին արդյունք

2009թ. երկրորդ կիսամյակում արտադրվել է ՀՆԱ-ի 58.3 տոկոսը, իսկ 2008թ.՝ 59.5 տոկոսը: Այս երևույթը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության, շինարարության, առևտրի ու հանրային սննդի ճյուղերի սեզոնայնությամբ: Այսպես, եթե 2009թ. առաջին կիսամյակում այս ճյուղերի ավելացված արժեքների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմել է 26.8 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 8.7 տոկոս), ապա երրորդ եռամսյակում՝ 38.5 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 21.6 տոկոս), իսկ չորրորդ եռամսյակում՝ 34.1 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 13.6 տոկոս): 2008թ. նշված ճյուղերի հանրագումարի տեսակարար կշիռը երրորդ եռամսյակում կազմել է 38.4 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 24.4 տոկոս), իսկ չորրորդ եռամսյակում՝ 40.1 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 16.5 տոկոս):

*Համախառն ներքին արդյունքն ըստ եռամսյակների*

/ ընթացիկ գներով, մլն դրամ /

| | I | II | III | IV | Տարի | ՀՆԱ-ի իրական հավելաճի տեմպը (2009թ. տոկոսներով 2008թ. նկատմամբ) |
|---|---|---|---|---|---|---|
| **ՀՆԱ** | **17279.4** | **25511.7** | **26559.2** | **32988.4** | **102338.7** | **13.1** |
| Ապրանքների արտադրություն | 5063.2 | 10278.7 | 11692.9 | 15276.8 | 42311.6 | 11.1 |
| Ծառայությունների արտադրություն | 11587.6 | 14048.2 | 13300.5 | 16047.4 | 54983.7 | 17.5 |
| այդ թվում՝ շուկայական ծառայություններ | 4985.7 | 6613.5 | 7242.6 | 8454.8 | 27296.6 | 34.0 |
| ոչ շուկայական ծառայություններ | 6601.9 | 7434.7 | 6057.9 | 7592.6 | 27687.1 | 5.1 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | 653.5 | 775.0 | 845.3 | 1009.4 | 3283.2 | 32.7 |
| Ապրանքների զուտ հարկեր | 1282.1 | 1959.8 | 2411.1 | 2673.6 | 8326.6 | -1.1 |

Դիտարկելով ՀՆԱ-ի դինամիկան եռամսյակների կտրվածքով նկատում ենք, որ ՀՆԱ-ի իրական աճը պայմանավորված է հիմնական բաղադրիչների աճերով:

Տարվա ընթացքում ապրանքների արտադրության ոլորտում տեղի է ունեցել 3.7 տոկոսից մինչև 40.8 տոկոս աճ:

Ծառայությունների արտադրության ոլորտի ամենաբարձր աճի մակարդակը դիտվել է առաջին եռամսյակում, իսկ ամենացածրը՝ երկրորդ եռամսյակում, որը լրիվությամբ համընկնում է շուկայական ծառայությունների դինամիկայի հետ:

Համախառն ներքին արդյունք

Ապրանքների զուտ հարկերի ամենաբարձր աճ նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ տեղի է ունեցել երկրորդ եռամսյակում 17.7 տոկոսով, իսկ առաջին եռամսյակում արձանագրվել է 20.0 տոկոս նվազում:




**Գծապատկեր 4: ՀՆԱ-ի և նրա հիմնական բաղադրիչների դինամիկան (մլն դրամ)**

Ընդհանուր առմամբ, համախառն շահույթի և համախառն խառը եկամտի դինամիկան հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության առանձնահատկություններով: Այսպես, քանի որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի գերակշռող մասն արտադրվում է տնային տնտեսություններում, որոնց ստացած եկամուտը գրեթե լրիվությամբ հանդիսանում է խառը եկամուտ, ապա արտադրության ծավալների փոփոխությունը (որը համընկնում է ՀՆԱ-ի արտադրության դինամիկայի հետ) բերում է շահույթի և խառը եկամտի նմանօրինակ շարժերի:

2009թ. ապրանքների զուտ հարկերը աճում են բոլոր եռամսյակներում, սակայն եթե 2008թ. ապրանքների զուտ հարկերի աճը բարձր է երրորդ և չորրորդ եռամսյակներում, 2009թ. այն դիտարկվել է երկրորդ եռամսյակում:

Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության աճը 2009թ. 2008թ. նկատմամբ պայմանավորված է բոլոր եռամսյակների ընթացքում (բացառությամբ երկրորդից) համարյա բոլոր ոլորտներում աշխատանքի վարձատրության աճով: Ըստ եռամսյակների 2009թ. 2008թ. նկատմամբ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության նվազում դիտվում է երկրորդ եռամսյակում:

Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության կշռի ամենաբարձր մակարդակը 2009թ. դիտվում է չորրորդ եռամսյակում՝ ամբողջ տարվա աշխատանքի վարձատրության 29.8 տոկոսը, 2008թ.՝ 30.7 տոկոսի դիմաց:

Ինչ վերաբերում է արտադրության այլ զուտ հարկերի փոփոխությանը, ապա այն կախված չէ արտադրության ծավալների փոփոխություններից՝ կապված տվյալ խմբի մեջ մտնող հարկատեսակների բնույթից: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշները

նվազել է 34.1 տոկոսով: Չնայած այս հանգամանքին, նախորդ եռամսյակի համեմատ 2009թ. բոլոր եռամսյակների ընթացքում տեղի է ունեցել արտադրության այլ զուտ հարկերի աճ:

## Համախառն ներքին արդյունքի հաշվարկն արտադրական եղանակով 2009թ.

Արտադրական եղանակով ՀՆԱ-ն տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների գումարն է, որի ծավալը ձևավորվում է որպես արտադրանքի թողարկման և միջանկյալ սպառման տարբերություն, ընդ որում ՀՆԱ-ն հաշվարկվում է շուկայական գներով, այսինքն՝ գումարվում են նաև ապրանքների զուտ (առանց սուբսիդիաների) հարկերը:

*Արտադրության հաշիվ*

/ընթացիկ գներով, մլն դրամ/

| | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | |
| Համախառն թողարկում | 152011.3 | 176453.5 |
| Ապրանքների զուտ հարկեր | 7741.4 | 8326.6 |
| **Ընդամենը** | **159752.7** | **184780.1** |
| **Օգտագործում** | | |
| Միջանկյալ սպառում | 72604.6 | 82441.4 |
| Համախառն ներքին արդյունք | 87148.1 | 102338.7 |
| **Ընդամենը** | **159752.7** | **184780.1** |

Համախառն թողարկումը հանդիսանում է ռեսուրսների ստեղծման գլխավոր աղբյուրը: 2009թ. ԼՂՀ համախառն թողարկումը կազմել է 176453.5 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.1 տոկոսով: Համախառն թողարկման աճը պայմանավորված է և ապրանքների, և ծառայությունների արտադրության ոլորտների համապատասխան թողարկումների աճերով՝ համապատասխանաբար 16.6 և 15.4 տոկոսով:

Ապրանքների ստեղծման գործընթացում ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապրանքների արտադրության ոլորտներում համախառն թողարկումը կազմել է ընդհանուրի 55.1 տոկոսը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.3 տոկոսային կետով:

Ապրանքների արտադրության ոլորտի համախառն թողարկման աճը նախորդ տարվա համեմատ հիմնականում արդյունք է արդյունաբերության, շինարարության և գյուղատնտեսության աճերի համապատասխանաբար՝ 27.8, 23.8 և 3.0 տոկոսով:

Համախառն ներքին արդյունք

2008-2009թթ. համախառն թողարկումների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2009թ. նախորդ տարվա համեմատ ծառայությունների արտադրության ոլորտի համախառն թողարկման տեսակարար կշիռը նվազում է ընդհանուր թողարկման մեջ՝ 0.3 տոկոսային կետով՝ պայմանավորված ապրանքների արտադրության համախառն թողարկման առաջանցիկ աճով և ոչ շուկայական ծառայությունների համախառն թողարկման նվազմամբ:

Շուկայական ծառայությունների ոլորտում համախառն թողարկումը 2009թ. 2008թ. համեմատ աճել է 37.1 տոկոսով կամ 11013.4 մլն դրամով, ընդ որում տրանսպորտը և կապը՝ 39.4 տոկոսով կամ 3866.3 մլն դրամով, առևտուր ու հանրային սնունդը՝ 7.0 տոկոսով կամ 673.0 մլն դրամով: Ոչ շուկայական ծառայությունների ոլորտում համախառն թողարկումը նվազել է 1.1 տոկոսով, ընդ որում, կառավարում և պաշտպանության ճյուղում՝ 4.5 տոկոսով կամ 1205.6 մլն դրամով, մշակույթ և արվեստում՝ 29.6 տոկոսով կամ 337.2 մլն դրամով:

2009թ. համախառն թողարկման կառուցվածքում նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել միջանկյալ սպառման տեսակարար կշռի նվազում՝ 1.1 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերություն (4.3 տոկոսային կետով), շինարարության (2.3 տոկոսային կետով), առևտուր և հանրային սնունդ (3.0 տոկոսային կետով) ճյուղերի միջանկյալ սպառման կշիռների նվազմամբ:

Ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշռի աճը համախառն թողարկման մեջ հետևանք է բոլոր ճյուղերի տեսակարար կշիռների աճի, բացի գյուղատնտեսությունից:




**Գծապատկեր 5:** **Բազային ճյուղերի միջանկյալ սպառման տեսակարար կշիռները համախառն թողարկման մեջ (տոկոսներով):**

Կառուցվածքային տեսանկյունից առաջատար տեղ է զբաղեցրել ծառայությունների արտադրության ոլորտի ավելացված արժեքը՝ կազմելով ՀՆԱ-ի 53.7 տոկոսը և նախորդ տարվա համեմատ նվազելով 0.3 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ նվազել է նաև ապրանքների զուտ հարկերի տեսակարար կշիռը՝ 0.8 տոկոսային կետով:

*Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը*

/տոկոսներով՝ ՀՆԱ-ի նկատմամբ/

| | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|
| ***Համախառն ներքին արդյունք*** | ***100.0*** | ***100.0*** |
| Ապրանքների արտադրություն | 39.8 | 41.4 |
| Ծառայությունների արտադրություն | 54.0 | 53.7 |
| այդ թվում՝ շուկայական ծառայություններ | 23.2 | 26.7 |
| ոչ շուկայական ծառայություններ | 30.8 | 27.0 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | 2.7 | 3.2 |
| Ապրանքների զուտ հարկեր | 8.9 | 8.1 |

Ոչ շուկայական ծառայությունները հիմնականում մատուցվում են պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող հիմնարկների կողմից: Այն մատնանշում է պետական և համայնքային բյուջեների նշանակալի դերը ՀՆԱ-ի ձևավորման գործընթացում, որը 2009թ. նախորդ տարվա համեմատ նվազել է 3.8 տոկոսային կետով:

2009թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել է նաև ապրանքների զուտ հարկերի տեսակարար կշիռը 8.9 տոկոսից՝ 2008թ. մինչև 8.1 տոկոս՝ 2009թ.:

Ընդհանուր առմամբ 2009թ. 2008թ. նկատմամբ ապրանքների զուտ հարկերը աճել են 585.2 մլն դրամով կամ 7.6 տոկոսով: Այն գլխավորապես պայմանավորված է հաստատագրված վճարի, առևտրի և ավելացված արժեքի հարկերի ծավալների աճով՝ համապատասխանաբար 18.0, 10.7 և 4.7 տոկոսով:

## Համախառն ներքին արդյունքի հաշվարկը եկամուտների ձևավորման եղանակով 2009թ.

Եկամուտների ձևավորման եղանակով ՀՆԱ-ի հաշվարկը արտացոլում է ապրանքների և ծառայությունների արտադրությանն անմիջականորեն մասնակցած կառուցվածքային միավորների կողմից սկզբնական եկամուտների վճարները:

Համախառն ներքին արդյունք

Ըստ եկամուտների ձևավորման ՀՆԱ-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2009թ. նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրությունն աճել է 10.8 տոկոսով, իսկ համախառն շահույթն ու համախառն խառն եկամուտը՝ 30.8 տոկոսով:

*Եկամուտների ձևավորման հաշիվ*

/ընթացիկ գներով մլն դրամ/

| | 2008թ. | 2009թ. |
|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | |
| Համախառն ներքին արդյունք | 87148.1 | 102338.7 |
| **Ընդամենը** | **87148.1** | **102338.7** |
| **Օգտագործում** | | |
| Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն | 48145.5 | 53334.7 |
| Ապրանքների զուտ հարկեր | 7741.4 | 8326.6 |
| Արտադրության այլ զուտ հարկեր | 314.2 | 207.0 |
| Համախառն շահույթ և համախառն խառն եկամուտ | 30946.9 | 40470.4 |
| այդ թվում՝<br>հիմնական միջոցների օգտագործում | 6364.3 | 7754.2 |
| զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ | 24582.6 | 32716.2 |
| **Ընդամենը** | **87148.1** | **102338.7** |

Տնտեսության առանձին հատվածներում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության դինամիկայի դիտարկմամբ արձանագրվել են հետևյալ տեղաշարժերը. ապրանքների արտադրության ոլորտում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը նախորդ տարվա համեմատ աճել է 14.3 տոկոսով, իսկ ծառայությունների արտադրության ոլորտում՝ 9.4 տոկոսով, որը պայմանավորված է և շուկայական, և ոչ շուկայական ծառայությունների համապատասխանաբար 25.7 և 3.3 տոկոս աճերով:

Ապրանքների արտադրության ոլորտում տեղ գտած վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության աճը գլխավորապես պայմանավորված է արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, անտառտնտեսության ճյուղերում այդ ցուցանիշի 5.4-ից մինչև 28.6 տոկոս աճերով:

Ինչպես արդեն նշվել է, 2009թ. նախորդ տարվա համեմատ 30.8 տոկոսով աճել է համախառն շահույթը ու համախառն խառն եկամուտը, ընդ որում՝ հիմնական միջոցների օգտագործումն աճել է 21.8 տոկոսով, իսկ զուտ շահույթ ու զուտ խառն եկամուտը՝ 33.1 տոկոսով:

Համախառն ներքին արդյունք

2009թ. նախորդ տարվա համեմատ հիմնական միջոցների օգտագործման աճը պայմանավորված է արդյունաբերության, շինարարության, կապի, նյութատեխնիկական մատակարարման ճյուղերում այդ ցուցանիշի աճով: Ապրանքների արտադրության ոլորտում աճը կազմել է 56.5 տոկոս, իսկ ծառայությունների արտադրության ոլորտում՝ 4.7 տոկոս, ընդ որում՝ շուկայական ծառայությունների ոլորտում՝ 7.0 տոկոս:




**Գծապատկեր 6: ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ եկամուտների ձևավորման (տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ)**

2009թ. ՀՆԱ-ի՝ ըստ եկամուտների ձևավորման կառուցվածքի մեջ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը կազմել է 52.1 տոկոս և 2008թ. համեմատ նվազել է 3.1 տոկոսային կետով, իսկ ապրանքների զուտ հարկերի տեսակարար կշիռը՝ 0.8 տոկոսային կետով: Ի հակառակ դրա համախառն շահույթի և համախառն խառն եկամտի տեսակարար կշիռը աճել է 4.1 տոկոսային կետով:

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

*Մակրոտնտեսական ցուցանիշների, ազգային հաշիվների և ֆինանսների վիճակագրության բաժին*
*հեռ 94-46-23*

*Հավելված 1*

*Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի (2007թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | *67814.6* | *39549.3* | *28265.3* |
| Արդյունաբերություն | 21301.9 | 10805.6 | 10496.3 |
| Գյուղատնտեսություն | 26482.6 | 15354.5 | 11128.2 |
| Անտառտնտեսություն | 264.5 | 126.7 | 137.7 |
| Շինարարություն | 19765.6 | 13262.5 | 6503.1 |
| *Ծառայությունների արտադրություն* | *57046.2* | *19023.5* | *38022.7* |
| *Շուկայական ծառայություններ* | *23317.7* | *7514.3* | *15803.4* |
| Տրանսպորտ | 2627.2 | 1460.8 | 1166.4 |
| Կապ | 4505.4 | 1472.1 | 3033.3 |
| Առևտուր և հանրային սնունդ | 8096.1 | 2779.5 | 5316.6 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 388.3 | 29.4 | 358.9 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 20.9 | 4.4 | 16.5 |
| Խմբագրություն | 94.3 | 25.7 | 68.7 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 222.0 | 46.9 | 175.1 |
| Երկրաբանություն | 24.8 | 7.9 | 17.0 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 164.6 | 29.0 | 135.6 |
| Բնակարանային տնտեսություն | 44.8 | 16.1 | 28.8 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 1578.9 | 945.6 | 633.3 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 99.2 | 36.5 | 62.7 |
| Ապահովագրություն և կենսաթոշակային ապահովում | 8.6 | 1.9 | 6.7 |
| Կրթություն | 676.8 | 82.8 | 594.0 |
| Մշակույթ և արվեստ | 411.9 | 83.1 | 328.7 |
| Վարկավորում | 4313.0 | 477.4 | 3835.6 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 40.9 | 15.3 | 25.5 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *33728.5* | *11509.2* | *22219.3* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 437.0 | 279.1 | 157.8 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 2079.6 | 702.2 | 1377.3 |
| Ապահովագրություն և կենսաթոշակային ապահովում | 94.7 | 19.6 | 75.1 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 111.0 | 23.8 | 87.3 |
| Կրթություն | 5669.3 | 601.5 | 5067.8 |
| Մշակույթ և արվեստ | 1055.5 | 567.1 | 488.3 |
| Կառավարում և պաշտպանություն | 24181.0 | 9294.8 | 14886.2 |
| Հասարակական կազմակերպություններ | 100.4 | 21.0 | 79.4 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | | 2058.0 | -2058.0 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | **124860.8** | **60630.8** | **64230.0** |
| Զուտ հարկեր | | | 6561.0 |
| **Համախառն ներքին արդյունք** | | | **70791.0** |

## *Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի (2007թ.)*

*/տոկոսներով ընդամենի նկատմամբ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | *54.3* | *65.2* | *39.9* |
| Արդյունաբերություն | 17.1 | 17.8 | 14.8 |
| Գյուղատնտեսություն | 21.2 | 25.3 | 15.7 |
| Անտառտնտեսություն | 0.2 | 0.2 | 0.2 |
| Շինարարություն | 15.8 | 21.9 | 9.2 |
| *Ծառայությունների արտադրություն* | *45.7* | *31.4* | *53.7* |
| *Շուկայական ծառայություններ* | *18.7* | *12.4* | *22.3* |
| Տրանսպորտ | 2.1 | 2.4 | 1.7 |
| Կապ | 3.6 | 2.4 | 4.3 |
| Առևտուր և հանրային սնունդ | 6.5 | 4.6 | 7.5 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 0.3 | 0.0 | 0.5 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 0.0 | 0.0 | 0.0 |
| Խմբագրություն | 0.1 | 0.0 | 0.1 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 0.2 | 0.1 | 0.3 |
| Երկրաբանություն | 0.0 | 0.0 | 0.0 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 0.1 | 0.0 | 0.2 |
| Բնակարանային տնտեսություն | 0.0 | 0.0 | 0.0 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 1.3 | 1.6 | 0.9 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 0.1 | 0.1 | 0.1 |
| Ապահովագրություն և կենսաթոշակային ապահովում | 0.0 | 0.0 | 0.0 |
| Կրթություն | 0.5 | 0.1 | 0.8 |
| Մշակույթ և արվեստ | 0.3 | 0.1 | 0.5 |
| Վարկավորում | 3.5 | 0.8 | 5.4 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 0.0 | 0.0 | 0.0 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *27.0* | *19.0* | *31.4* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 0.3 | 0.5 | 0.2 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 1.7 | 1.2 | 1.9 |
| Ապահովագրություն և կենսաթոշակային ապահովում | 0.1 | 0.0 | 0.1 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 0.1 | 0.0 | 0.1 |
| Կրթություն | 4.5 | 1.0 | 7.2 |
| Մշակույթ և արվեստ | 0.8 | 0.9 | 0.7 |
| Կառավարում և պաշտպանություն | 19.4 | 15.3 | 21.0 |
| Հասարակական կազմակերպություններ | 0.1 | 0.0 | 0.1 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | | 3.4 | -2.9 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | **100.0** | **100.0** | **90.7** |
| Զուտ հարկեր | | | 9.3 |
| **Համախառն ներքին արդյունք** | | | **100.0** |

*Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների (2007թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | I# | II | III | IV | Տարի |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| Համախառն թողարկում | 19992.6 | 28265.3 | 37073.7 | 39529.2 | 124860.8 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 9360.3 | 13415.6 | 23473.0 | 21565.6 | 67814.6 |
| Ծառայությունների արտադրություն | 10632.2 | 14849.7 | 13600.6 | 17963.6 | 57046.2 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *4266.6* | *6074.7* | *5366.6* | *7609.8* | *23317.7* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *6365.6* | *8775.0* | *8234.0* | *10353.9* | *33728.5* |
| Զուտ հարկեր | 1647.5 | 1627.1 | 1729.8 | 1556.6 | 6561.0 |
| **Ընդամենը** | **21640.0** | **29892.4** | **38803.5** | **41085.8** | **131421.8** |
| **Օգտագործում** | | | | | |
| Միջանկյալ սպառում | 9576.3 | 13224.2 | 18966.7 | 18863.6 | 60630.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 5862.0 | 7492.2 | 14346.8 | 11848.2 | 39549.3 |
| Ծառայությունների արտադրություն | 3231.3 | 5244.3 | 4116.8 | 6431.2 | 19023.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *1495.7* | *1901.0* | *1413.7* | *2703.9* | *7514.3* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *1735.5* | *3343.4* | *2703.0* | *3727.3* | *11509.2* |
| Համախառն ներքին արդյունք | 12063.8 | 16668.2 | 19836.8 | 22222.2 | 70791.0 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 3498.3 | 5923.4 | 9126.2 | 9717.4 | 28265.3 |
| Ծառայությունների արտադրություն | 7401.0 | 9605.4 | 9483.9 | 11532.4 | 38022.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *2770.9* | *4173.7* | *3952.9* | *4905.9* | *15803.4* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *4630.1* | *5431.7* | *5531.0* | *6626.6* | *22219.3* |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | -483.0 | -487.7 | -503.1 | -584.2 | -2058.0 |
| Զուտ հարկեր | 1647.5 | 1627.1 | 1729.8 | 1556.6 | 6561.0 |
| **Ընդամենը** | **21640.0** | **29892.4** | **38803.5** | **41085.8** | **131421.8** |

*Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների (2007թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | I# | II | III | IV | Տարի |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| Համախառն ներքին արդյունք | 12063.8 | 16668.2 | 19836.8 | 22222.2 | 70791.0 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 3498.3 | 5923.36 | 9126.2 | 9717.43 | 28265.3 |
| Ծառայությունների արտադրություն | 7401.0 | 9605.4 | 9483.9 | 11532.4 | 38022.70 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *2770.9* | *4173.7* | *3952.9* | *4905.9* | *15803.4* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *4630.1* | *5431.7* | *5531.0* | *6626.6* | *22219.3* |
| **Ընդամենը** | **12063.8** | **16668.2** | **19836.8** | **22222.2** | **70791.0** |
| **Օգտագործում** | | | | | |
| Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն | 7235.4 | 9917.3 | 8237.5 | 14580.3 | 39970.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 1809.8 | 3161.0 | 1600.2 | 5346.3 | 11917.4 |
| Ծառայությունների արտադրություն | 5425.6 | 6756.4 | 6637.2 | 9233.9 | 28053.1 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *1208.2* | *1663.0* | *1446.9* | *3121.6* | *7439.7* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *4217.4* | *5093.3* | *5190.4* | *6112.3* | *20613.4* |
| Հիմնական միջոցների օգտագործում | 965.2 | 1162.4 | 1024.4 | 1672.6 | 4824.6 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 137.5 | 472.3 | 297.9 | 660.1 | 1567.8 |
| Ծառայությունների արտադրություն | 828.4 | 690.1 | 726.5 | 1012.6 | 3257.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *415.8* | *351.5* | *385.9* | *498.3* | *1651.7* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *412.5* | *338.5* | *340.6* | *514.2* | *1605.9* |
| Զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ | 2180.1 | 3915.9 | 8791.4 | 4389.4 | 19276.8 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 1525.9 | 2268.4 | 7189.8 | 3694.6 | 14678.7 |
| Ծառայությունների արտադրություն | 1137.2 | 2135.1 | 2104.7 | 1279.1 | 6656.1 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *1137.0* | *2135.3* | *2104.7* | *1279.1* | *6656.1* |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | -483.0 | -487.7 | -503.1 | -584.2 | -2058.0 |
| Արտադրության այլ զուտ հարկեր | 35.7 | 45.5 | 53.7 | 23.3 | 158.1 |
| Զուտ հարկեր | 1647.5 | 1627.1 | 1729.8 | 1556.6 | 6561.0 |
| **Ընդամենը** | **12063.8** | **16668.2** | **19836.8** | **22222.2** | **70791.0** |

*Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի (2008թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | *83333.9* | *48666.3* | *34667.6* |
| Արդյունաբերություն | 24607.3 | 12530.4 | 12076.9 |
| Գյուղատնտեսություն | 33016.0 | 19238.6 | 13777.4 |
| Անտառտնտեսություն | 256.1 | 28.5 | 227.6 |
| Շինարարություն | 25454.5 | 16868.7 | 8585.7 |
| *Ծառայությունների արտադրություն* | *68677.3* | *21592.5* | *47084.9* |
| *Շուկայական ծառայություններ* | *29660.6* | *9403.7* | *20256.9* |
| Տրանսպորտ | 3863.6 | 2145.9 | 1717.7 |
| Կապ | 5941.2 | 1646.2 | 4294.9 |
| Առևտուր և հանրային սնունդ | 9590.0 | 3164.7 | 6425.3 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 569.1 | 45.1 | 524.0 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 32.0 | 7.6 | 24.4 |
| Խմբագրություն | 117.1 | 32.4 | 84.7 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 268.7 | 63.4 | 205.2 |
| Երկրաբանություն | 24.5 | 7.4 | 17.2 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 202.6 | 28.1 | 174.5 |
| Բնակարանային տնտեսություն | 71.0 | 20.5 | 50.6 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 2406.1 | 1478.1 | 927.9 |
